ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ղուկասեան Գրական Մնայուն Ցանձնաժողովը «Ղուկասեան Մատենադարան» ընդհանուր խորագրով հրատարակում է հայ մատենագիրները, և մինչև այժմ լոյս է ածել Եղիշէի, Ղազար Փարպեցու, Կիրակոս Գանձակեցու և Ստեփաննոս Օրբելեանի պատմական երկերը։ Այս բոլոր հրատարակութիւններն էլ կատարուած են առանց ձեռագիրների և տպուած օրինակների համեմատութեան ու առանց ծանօթութիւնների։ Հրատարակիչների նպատակը եղել է միայն տալ հայ ժողովրդին էժանագին մի հրատարակութիւն, մատչելի դարձնել հայ մատենագիրները հայ ժողովուրդին։ Սակայն քանի որ հայ ժողովուրդը չի հասկանում այդ մատենագիրների լեզուն, հետևապէս և՛ այդ ժողովրդական հրատարակութիւնը չի ծառայիլ իւր նպատակին, չի տարածուիլ բուն ժողովրդի մէջ, մինչդեռ եթէ նա թարգմանուած լինէր ժողովրդի լեզուով, այն ժամանակ ամէն մի հայի մատչելի կը լինէր, ուստի և՛ Ղուկասեան Մնայուն Ցանձնաժողովը կամ պէտք է հրատարակէ մատենագրների աշխարհաբար թարգմանութիւնը, որ չափազանց դեղեցիկ գործ կատարած կը լինի, և կամ եթէ չի ուզում մատենագիրների գիտական, այսինքն ձեռագիրների և տպուած օրինակների համեմատուած հրատարակութիւնը տալ, որի կարիքը չափազանց զգացուում է, գոնէ հրատարակէ մինչև այժմ լոյս չտեսած մատենագիրներ, տարեգիրներ, յիշատակարաններ, ձեռագիրների ցուցակներ, դիվանական վաւերաթղթեր, որոնց հրատարակութեան համար մասնաւոր նիւթական միջոցներ չլինելու պատճառով հետզհետէ կորչում, անհետանում են։

Ե. Լ.

Ա Շ Ո Ւ Ղ Ը

Արշակ Չօպանեան. Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը. հրատարակութ. Տիգրան խան Քելեկեանի, Փարիզ 1910 թ. 128 եր. գինը 3 ֆր.

—

Մեր նորագոյն գրականութեան մէջ յայտնի բելլետրիստ-բանասէր պ. Արշակ Չօպանեան Փարիզում իր մի շարք ինքնուրոյն և թարգմանական բանաստեղծական գնահատելի հատորների լոյս ընծայումի հետ, մէջ ընդ մէջ հրատարակութեան է յանձնում նաև հայ տաղերգու բանաստեղծների ամբողջական գործերը։ Մօտ տասը տարի առաջ պ. Չօպանեանի հրատարակած «Նահապետ Քուչակի դիւանը» իր քննական լուրջ ուսումնասիրութեամբ պատկառելի տեղ գրաւեց մեր գեղեցիկ մատենագրութեան մէջ ու ստացաւ մամուլի և բանասէր հասարակութեան քաջալերութիւնը։ Քուչակից յետոյ միմեանց յետևից լոյս տեսան նրա «Poémes arme'niens anciens et modernes», «Chants populaires arme'niens», «Les Trouvères arme'niens», երեք հայ-ֆրանսական թարգմանական գեղեցիկ հատորները՝ նուիրուած մեր հին ու նոր վիպասանութեան, ժողովրդական և աշուղական երգ ու տաղին։ Պ. Չօպանեան, թերևս, եզակի դէմք է ներկայումս մեր գրականութեան գեղեցիկ հատուածները ֆրանսերէն լեզուի վերածելու գործում և այնքան հմուտ ու շնորհալի, որ արժանացել է ֆրանսական Ակադիմիայի մրցանակին։

Մեր յօդուածի վերնագիրը կրող գիրքը «Նաղաշ Յովնաթանը» լոյս տեսաւ անցեալ 1910 թ-ին գեղեցիկ հրատարակութեամբ և բազմաթիւ պատկերներով։

Գիրքը բովանդակում է հետևեալ բաժինները. —

Ներածութիւն. Ա. Նաղաշ Յովնաթան բանաստեղծը.—Բ. Յովնաթան Յովնաթանեան նկարիչը.—Նաղաշ Յովնաթանի տաղերը.—Յովնաթան Յովնաթանեանի նկարները (մէջ ընդ մէջ դասաւորուած).— Բառարան։

Խօսենք հերթով.—

Նախ քան ստորաբաժանումներին անցնելը իր ներածութեան սկզբում պ. Չօպանեան ասում է։—

Մեր մէջ յաճախ գանգատներ բարձրացած են մեր նախնեաց թողած գրական ու գեղարուեստական արտայայտութեան միօրինակութեան, աղքատութեան մասին։ Բայց քանի անցեալը

կը պրպտենք, քանի հողուն տակը թաղուած վաղնջական կիսափուլ տաճարներու մէջ մոռցուած կամ ձեռագիրներու մէջ թաքչած հնօրեայ հայ մտաւոր կեանքի նշխարները երևան կը հանենք, կը ստիպուինք խոստովանելու, որ գանգատուելու իրաւունք ունեցողը չէ թէ մենք, այլ մեր նախնիքն են։... Ահա բանաստեղծ Յովնաթան մը և նկարիչ Յովնաթան մը, որ դեռ մենէ միայն մէկ ու կէս դար արժէքաւոր գործ մը արտադրեր են, և այսօր անոնց անունն իսկ մեզի անծանօթ է։ Ո՞վ գիտէ՝ աւելի հին ժամանակներու մէջ, ինչքան Յովնաթաններ գոյութիւն են ունեցած, որոնց գործն ու յիշատակը կորած է տոյաւէտ կամ խուլ անկիւն մը խրած՝ խուզարկու ձեռքի մը կսպասէ»։

Շատ և շատ իրաւացի է պ. Զօպանեանի զայրոյթը. քաղաքակիրթ Եւրոպայի կենդրոնում նստած զգայուն բանաստեղծ— հոգին է որ վրդովում է մեր թմրած ասիականութեան, մեր անգիտակ և ինքնագոհ վերաբերմունքի համար դէպի մայրենի գրականութիւնն ու գեղարուեստը։

«Աշուղ» և «նկարիչ». ո՞վ էր, որ պէտք է նշանակութիւն տար մեր կեանքում այդպիսի մարդկանց թողած գործերուն. մի՞թէ շատ ենք ունեցել Գէորգ Ախվերդեաններ, Ոսկան Յովհաննիսեաններ և Զօպանեաններ որոնք «ձեռագիրներու մէջ թաղչած հնօրեայ հայ մտաւոր կեանքին նշխարները» երևան հանէին, կամ Թօրամանեաններ ու Գարեգին վարդապետներ որ «հողուն տակը թաղուած վաղնջական կիսափուլ տաճարներու մէջ մոռցուած» քանդակներով ու մանրանկար պատկերներով զբաղուէին։

Ընդհակառակը. ծաղրէին, հեգնանքի ու տգէտ արհամարհանքի էին արժանանում մեր մեծամիտ ու թերուս շրջաններում աշուղն ու աշուղական երգերը, և պատկերներով «ողողուած ու գեղազարդուած» պատերն ու ձեռագիրները քանդուում, փճացուում էին «անհաւատալի վանդալութեամբ»։

Պ. Զօպանեան հրատարակելով Նաղաշների գեղեցիկ հատորը փափաք է ունեցել «դարմանել հայ հասարակութեան այդ ապաշնորհ վերաբերմունքը դէպի իր այդ երկու տաղանդաւոր զաւակները»։ Եւ յարգելի բանասէրի այդ փափաքը, պէտք է ասել, կատարուած է. այժմ ինչպէս որ Սայեաթ-Նովան, Նահապետ Քուչակը, Նաղաշ Յովնաթեան աշուղն էլ իր տաղերով ու խաղերով արդէն ընթերցող հասարակութեան սեփականութիւն է։

«Մինչ դեռ Սայեաթ-Նովայի և իրեն յաջորդող գրեթէ բոլոր աշուղներուն—գրում է պ. Ա. Զ. նոյն իսկ ամենէն միջակներուն, երգերը հրատարակուած են գրքի ձևով և հաւաքածուներու մէջ բազմիցս արտատպուած, մինչև այսօր անտիպ մնա-

ցած են տաղերը Նաղաշ Յովնաթանին, այդ նուրբ երգչին, որ Սայաթ-Նովայէն իսկ առաջ Կովկասի մէջ հայկական սազը հնչեցուցած է ամենաքաղցր շեշտերով։ Պ. Գ. Լեոնեանի «Հայ աշուղներ» գրքին մէջ Նաղաշ Յովնաթանի անունը յիշուած է անցողակի, երկրորդական աշուղի անունին պէս հետեւեալ երկտող ծանօթութեամբ. «Նաղաշ Յովնաթան (Կարճիկ Յովնաթան) յայտնի չէ թէ որտեղացի և որ թուականին է եղել. ունեցել է շատ հայերէն երգեր»։

Որովհետեւ այս տողերը վերաբերում են մեզ, թող թոյլ տրուի մի քանի խօսք ասել։

Դեռ քսան տարի առաջ (1892-ին) հրատարակած մեր մի պատանեկական աշխատութեան մէջ, երբ յիշեալ աշուղի մասին խպտառ պակասել են գրաւոր և բանաւոր տեղեկութիւններ, այդքանը միայն կարողացել ենք գրել, և առաջին անգամ տպագրել նրա «Ո՞ւսկից կուգաս զարիր բիւլբիւլ» երգը, որը և իւր ձեռագիր օրինակի հետ համեմատելով տպագրել է պ. Զ. Ա. իր հրատարակութեան 59 երեսում։

«Կարճիկ» բառի մօտ պ. Զօպանեան գրել է հարցական նշան (?). ահա մեր բացատրութիւնը։ Որովհետեւ Նաղաշներ եղել են մի քանիսը (Մկրտիչ Նաղաշ, Ամիր—Մուսէ Նաղաշ, Նաղաշ պապը, Նաղաշ որդին և Նաղաշ թոռը, այն Նաղաշը որի տաղերը հրատարակել է պ. Զ. միւսներից տարբերելու համար իր կարճ հասակի համեմատ կոչուել է և «Փիչիւկ Նաղաշ», որ և մենք թարգմանել ենք «Կարճիկ»... Բազմավաստակ բանասէր Ղ. Ալիշան երբ ստացել էր «Հայ աշուղները», պատիւ էր արել նրա հեղինակին մի նամակ ուղարկել, որի մէջ գրումէր որ «Նաղաշ Յովնաթան Շօռօթեցի է, ապրած ԺԷ-րդ դարուն վերջերը», այս է եղել Նահապետի ունեցած տեղեկութիւնը մեր աշուղի մասին։ Բացի Միանսարեանի «Փնար հայկականի» և Ա. Վ. Տէվկանցի «Հայերգի» մէջ տպուած մի մի տաղից, մեր «Հայ աշուղների» հրատարակութեան թուերին մեզ ուրիշ ոչինչ յայտնի չի եղել։

Երկու թէ երեք տարի անցնելուց յետոյ Ալէքսանդրապոլում մեզ բերին աշուղական ձիւռագիր երգարանների (դաֆտարների) մի մեծ կապոց, որի մէջ գտանք և Նաղաշ Յովնաթանի մի տետրակը։—

«Բանք և խրատք շահաւէտ և օգտակար հոգոյ և մարմնոյ, վասն տղայոց, երիտասարդաց և ծերոց, թէ որպիսի բարուք քաղաքավարութեան շարժել պարտ են՝ի ուտել և ի յմպելն՝ի յառևտուրս իւրեանց։ Շարադրեալ Նաղաշ Յովնաթանէ»։

Հետաքրքրական է այդ տետրակի յիշատակարանը։—

«Ես տրուպ Նաղաշ Յովնաթան
Գծագրեցի զայս տաղարան
Խաղ և տաղեր աղնուական
Խրատք և խօսք ծիծաղական
Եւ ծաղկեցաւ նման գարնան
Ձեռամբ որդւոյ իմ Յակոբեան
Պատկերներով տնօրինական
Ծաղկօք և թռչնօք զանազան
Ի վայելումն Յարութեան
Փոքր որդւոյն իմ սիրական»։

Այս յիշատակարանից պարզւում է որ Նաղաշ Յովնաթանի մեծ որդին Յակոբը, Յովնաթան Յովնաթանեանի հայրը (ըստ պ. Ա. Զ.) եղել է նոյնպէս նկարիչ, մանրանկարներով զարդարել է իր հօր տաղարանը) որը ընծայուելէ փոքր եղբօրը Յարութիւնին։

Այս տետրակը մեր ձեռքը հասնելուց յետոյ մենք արդէն հիմնովին բարեփոխել և լրացրել էինք մեր հայ աշուղներու մէջ Նաղաշ Յովնաթանին վերաբերեալ մասը, որանից դեռ 9 տարի առաջ, երբ «Ազգագրական հանդէսի» համար գրում էինք հայ աշուղների մասին մեր ընդարձակ ուսումնասիրութիւնը, այնտեղ արդէն մենք շատ պատուաւոր տեղ ենք տուել աշուղ Նաղաշին, ասելով որ միջնադարեան տաղասացներիշրջանից այս կողմը բուն աշուղական երգերի մէջ Քուչակ Նահապետ, Նաղաշ Յովնաթան, Սայեաթ—Նովա, Շիրին, Ջիւանի գլխաւոր հոսանքների գլուխ են կանգնած.

«Այսպիսով հայ աշուղութիւնը տաղասացներից սկիզբ առնելով Քուչակ Նահապետից, Նաղաշ Յովնաթանից անցնելով ընթանում է երկու ճանապարհով աշխարհիկ գոյն ստացած» (Ազգ. հանդ. գիրք X. եր. 67), հետևեալ 69 երեսում գծագրելով հայ աշուղների ծագումի և պատմական զանազան շրջանների և հոսանքների սքեման, Նաղաշ Յովնաթանին դրել ենք կենտրոնական տեղում, որից արդէն գծանկարը երկու ճիւղի է բաժանւում, ստեղծելով Սայեաթ-Նովայի և Շիրինի դպրոցները։

Անշուշտ մեր այս աշխատութիւնը ձեռքի տակ չի ունեցել պ. Ա. Զօպանեան։

*) Այժմ «Հանդէս ամսօրեայի» ապրիլ—մայիս տետրակում Հ. Ն. Ակինեանի յօդուածից տեղեկանում ենք որ դեռ 1860 թուին «Ճռաքաղում» և 1882 թուին Արձագանքում դրութիւններ են եղել Նաղաշ Յովնաթանի մասին և 1885 թուին «Մասիս» լրագրում Ե. Յարութիւնեան գրել է «գիներգութիւնք Նաղաշ Յովնաթանի» յօդուածը։

Ա. ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ.

«Յովնաթանի բանաստեղծութիւնները, կը բաղկանան երեք շարքէ, գրում է պ. Զօպանեան, կրօնական ու խրատական տաղեր, երգիծական քերթուածներ և խրախճանքի ու սիրոյ երգեր»։

Եւ այդ երեք կարգ բանաստեղծութիւններու մէջ յարգոյ բանասէրը գտնում է որ «ամենաստուար և լաւագոյն» մասը երրորդ կարգի քերթուածներն են, այսինքն—«սիրոյ, խրախճանքի երգեր, ընութեան գովքերն ու տօնական տաղերը», մենք համաձայնել կարող ենք այս տողերի հետ «լաւագոյնի» վերաբերմամբ, բայց ոչ «ամենաստուարի», որովհետև մեր ձեռքում եղած տաղարանում կան մի շարք «խրատական երգեր», որոնք չեն մտել պ. Զօպանեանի հրատարակութեան մէջ և որոնք նրա դասաւորութեամբ առաջին կարգին են պատկանում.—ահա այդ երգերը։—

1. Լուարուք դուք ամենքն Հարք և եղբարք պատուական
Զի ասասցի քանի մի բան Իբրև խրատ ինչ օգտութեան։

2. Վասն հատուցանելոյ զերախտիս աշխատաւորաց,

Լաւ արուեստ ուսիր, Որ չը քաշես դարտ
Եւ շատ գիտութիւն Եւ պակասութիւն...
Եւ այլն (14 տուն)։

3 Վասն երախտամոռաց մարդոյ։

Ոմանք ի մարդկանց Առին բաղում գանձ
Օգտեալ կանգնեցան Եւ հարստացան...
Եւ այլն (12 տուն)։

4. Վասն ջանջալ և խաբեբայ մարդոյ.

Հալալ պահողն Նաքաղ ջանջալին
Իւր առևտուրն Վնասէ իւրն
Նայէ մեր եղբայր Երեսն քսէ
Սիրելի հիւրն Գործելի մուրն
Եւ այլն (28 տուն)։

5. Վասն գեղեցիկ արուեստաւորաց, որ ոչ ճանաչող կայ ոչ պատիւ դնող.

Շնորհալից մարդկան Լինին բանի բուն...
Որ չեն լինի քուն Եւ այլն (14 տուն)
Ուսանին արհեստ

6. Վասն տգէտ և հպարտ, գոռոզ, ինքնահաւան, բարկացող մարդոյ.

Շատ գիտուն մարդն Չեն հաւան լենալ...

Զի ուրախանալ
Զէղայ (?) տղէտքն
Եւ այլն (16 տուն)

7. Վասն բէղայրաթի մարդոյ և տղայոց խրատ.

Նամուս ղայրաթի լաւ մարդն այն է
Որ գիշերն ի բուն բարակ միտք անէ
Մտքով իւր բանն ի գլուխ հանէ
Եւ ապա թոյլ տայ որ քունն տանէ...
Եւ այլն (9 տուն).

8. Վասն փնթի և անհոգ մարդոյ.

Փնթի մարդն է քմուրի մանղալ և այլն (5 տուն)

9. Վասն կարճամտութեան կանանց.

Կանանց խելքըն է
Այն ծաղկին նման
Որ իւրեանք ցանին
Մէջ խեցկի ման
Դեղին մեծ թուի է
Հասակաւ երկայն
Բնաւ հոտ չունի
Գոյնըն է միայն...
Եւ այլն (3 տուն).

10. Խրատ հասարակաց.

Ով մարդ որ կամիս
Կեանքդ երկարի
Եւ խաղաղ մնաս
Վերայ աշխարհի
Թող չար խօսելոյ
Լեղուդ ղադարի
Փախի ի չարէն
Եւ արա զբարի...
Եւ այլն (27 տուն).

«Սիրոյ և խրախճանքի», երգերից մեր տաղարանում կան հետևեալ երկու տաղերը, որոնք դուրս են մնացել պ. Զօպանեանի հրատարակութիւնից—

Եղբայրք յորժամ բազմիք սեղան
Խաղ, տաղ կանչէք խրախճանական
Գինի խմէք անապական
Ծափս հարկանէք ամենեքեան
Զնի շատ խմէք դառնաք բաց
(Եւ) սահմանէք կոիւ, տնկոց
Գլուխս ծակէք արիւն ի ծոց,
Զեր ծնողաց սիրտն շինէք խոց.
Այլ սիրով, պարկեշտ խմեցէք
Աշխատողաց կեանս խնդրեցէք
Զիս Յոհնաթանս յիշեցէք
Փառք տուք և Աստուած օրհնեցէք։

Հետևեալ տաղը հետաքրքրական է իր երկլեզու կազմութեամբ որ միակն է Նաղաշ Յոհնաթանի գործերի մէջ—

Դու նման ես արեգական
Ղօյնընդա վէր մանա մաքեան
Բիւլբիւլներն հարայ կարդան
Մանդա բիլայ զալում զալում։
Վարդայ գիւլլար սանդա եմիշ
Եկ դու ինձ մի անիր ղիմիշ
Վալլա գիւնահ մանդա իմիշ
Որ զքեզ տեսայ զալում զալում։

Նոնօֆար ծաղիկ եասման Աղ ուղնի տաքի սիահ խալ
(Զի կարդացուում) Ինձ մօտ չկայ..... հալ
Դարդի չեմ դիմանար եաման Ման նէյլարմ (պ) աղչայ ու մալ
Զանըմ ալդն զալում զալում։ Դու կու պիտիս (?) զալում զալում։

Թող քեզ ասեն շատ մահանայ Ալընդան դէյմիշամ զպայ
Գաղրում պաշի տօնտի դանայ Դարդէդ հաղնիմ ֆիահ խալայ
Այս կրակիս ով դիմանայ Գու սինամայ էյլայ չարայ
Եանդուր-ուփսան զալում զալում։ Դու ես.... զալում զալում։

Նաղաշին սիրտն արիր դուման Ես անկայ մէջն բեգուման
Դեօղլարն դարեայ տըր ուման Աու ալըմտան զալում զալում։

«Երգիծական կտորները» տասնէն աւելի են. ասոնց մէջ կան մի քանիներ, այնքան կոպիտ ու անհամ (հաւանականաբար ժամանցի համար թեթեւօրէն գրուած), որ «աւելորդ համարեցայ հրատարակել զանոնք—գրում է պ. Զօպանեան, նկատելով որ այդ այնքան երկար, որքան գռեհիկ կտորները բանաստեղծին աւելի վնասել կարող են քան ո և է հրապոյր աւելցնել իր գործին»։

Որ իսկապէս Նաղաշ Յովնաթանի երգիծական կտորները խիստ են ռամկական և գռեհիկ, այդ ուղիղ է նկատում պ. Զօպանեան, բայց որ Նաղաշ Յովնաթանին նուիրուած գիտական բանասիրական աշխատութեան մէջ պէտք էր տալ գոնէ այն կտորներից մի քանի նմուշներ, դա ևս անհրաժեշտ էր, ցուցադրելով երկու դար առաջ ապրած մեր աշուղի թէկուզ ժամանցի համար գրածները։ Իր ժամանակի, վարք ու բարքի, բառամթերքի ազգագրական այլ հարուստ նիւթեր են պարունակում Նաղաշի այն երգիծական կտորները որ կան մեր ձեռքում եղած տետրակում։

Օրինակ՝ «Անարգանք նաշի եւ կոպիտ մարդոյ».

Անպէտ ու տգէտ, սարի փթած փէտ Բիրտ ես ու նաշի, եղոտած կաշի
Վատիտ ու անմիտ, խակ և բըթամիտ. Դեռահաս տհաս և խելոց պակաս...
Զորացեալ սամիթ, յոյժ պակասամիտ Եւ այլն։

Ինչու չէր կարելի դնել նոյնպէս «Օրհնութիւն գիւղացի երիցուն» դարձեալ կաղմութեամբ գռեհիկ, բայց իր ազգագրական նշանակութեամբ ու սուր երգիծանքով ուշադրութեան արժանի յօրինուածքը, մանաւանդ երբ այնքան աղքատ է մեր երգիծաբանական դրականութիւնը։

Օրհնեսցի Հորեքանկիւնի տունս Զանազն ու թափազն
Խեցեղէնն ու պղնձեղէնն Թօրոնն ու օջաղն

Թուրքաւն ու մկնաւն
Եղամանն ու ձիթամանն
Թանամանն ու պանրամանն
Գինամանն ու ձկնամանն
Սրահն ու տունն
Կալն ու հաւի բունն
Ֆեօչքն ու օթաղն
Փետնոցն ու ճաղն
Մաղաղէն ու մառանն
Ծածուկ գաղտարանն
Մէջլիսն ու սեղանն
Կուժն ու քերդանն
Հանդ հանդաստանն
Ձիմանն ու պօստանն
Գոմն ու մարագն
Մածունն ու կարագն
Տօլապն ու թաղչէն
Այգին ու պաղչէն
Կարասն ու տուճն
Ղազանն ու կճուճն
Տաշտն ու մաղն
Բիբառն ու աղն
Ապրանքն ու մալն
Սուփրէն ու շալն
Վարն ու վաստակն
Գլուխն ու տակն
Էշըն ու ջորին
Դարմանն ու գարին
Կալն ու ջաղացն
Ցորենն ու հացն
Փէտն ու ցանն
Ամբարն ու հնձանն
Եզն ու կոշն
Աղբիւրն ու նօշն
Հողն ու քարն
Էծն ու ոչխարն
Դուռն ու հայեաթն
Հիմն ու բինեաթն
Այս նշանաւս սուրբ խաչիւս.

Այսքանը Նաղաշ Յոհնաթանի մասին որպէս տաղերգու բանաստեղծի, այժմ մի քանի խօսք ասենք նրա մասին որպէս երաժիշտ-նուագածուի.

«Ազգագրական Հանդէսի» մէջ անցեալ տարիներում շարունակաբար տպագրուող (գիրք X—XIV) մեր յօդուածի վերջին մասը, «աշուղի կեանքը» որոշ պատճառներով մնաց անտիպ. այնտեղ մենք գրած ունինք հետևեալը— հայ աշուղներից եղել են այնպիսիները, որոնք իրենց երգ ու նուագով հասել են մինչև արքունի պալատներ, Թուրքաց սուլթանների, փաշաների, պարսից շահերու և խաներու, վրաց թագաւորների և իշխանների առաջ ազատ ու համարձակ երգել է հայ աշուղը։ Միայն թէ այդ երեք տէրութիւնների, այսինքն Թիւրքաց, պարսից և վրաց արքունիներում հայ աշուղը իրեն պահել է տարբեր կերպով։ Սուլթանների ու փաշաների ապարանքներում մեր աշուղը միայն ծագումով է հայ եղել. խօսքով, լեզուով, հոգով, գործով եղել է համարեա Թուրք. շատ անգամ նրա ամենամօտ մարդիկ անգամ չեն իմացել նրա հայ լինելը, այնքան նա քաջ է եղել Թուրքերէն լեզուի մէջ ու տեղեակ Ղուրանին։ Այդպէս չէր մեր աշուղը շահերի ու խանների երկրում. այնտեղ նա կարողացել է պահել իր ինքնուրոյնութիւնը, լինել և հայ շրջաններում, երգել է ու խօսել է

եթէ ոչ հայ լեզուով, գոնէ հայ հոգով։ Աւելի ազատ ու համարձակ է եղել նա Վրաստանում. այստեղ, քրիստոնեայ պետութեան մէջ նա ոչ միայն չի ծածկել որ նա հայ է, այլ որպէս այդպիսին ազատ ել ու մուտ է ունեցել Հերակլի ու Վախտանգի արքունիքներում, երգ ու դիւնի սիրող իշխանների ու թաւատների սիրելի հիւրն է եղել, պատիւ, մեծարանք ստացել։ Անմոռանալի հնադէտ-կովկասագէտ Աղեքսանդր Երիցեանը մի անգամ մեզ մի նկար ցոյց տուեց որը ներկայացնում էր այդ կեանքից մի հետաքրքրական պատկեր։ Վրաց պալատի արևելեան ճաշակով զարդարուած մի սենեակում բարձերի վրայ ծալապատիկ նստած էին հայ աշուղները Նաղաշ Յոհնաթան և խումբը (որ միասին կոչուելիս են եղել Նաղաշներ)։ Նուագում էին ամբուրա, քամանչա և դահիրա. պատերի մօտ, փափուկ բազմոցների վրայ նստոտել էին կամ թիկն տուել պալատական գեղուհիները լսելու վարպետների երգ ու նուագը[1])։ Նաղաշ Յոհնաթան նշանաւոր աշուղ էր, նա արտօնութիւն ունէր վրաց պալատում երգել և հայերէն, ահա նա ինչպէս էր գովաբանում իր գեղեցկուհի ունկնդիրներին—

Գովեմ սրտիս ուրախական
Թիֆլիս քաղաքն պատուական
Յոյժ գեղեցիկ և սիրական
Ա՜յ Վրաստանայ գեօղաղներն
Շէն Թիֆլիսու խաթունները... և այլն

Որքան որ այս նշանաւոր աշուղը մեծ յարգ ու պատիւ է ունեցել բարձր, արքունի ու մեծամեծ շրջաններում, եղել է «այր երևելի», «շնորհալից վարպետ իմաստուն», «քարտուղար տաւից հնոց և նորոց», «զանազան շնորհք վարդապետաց ուսեալ» և այլն [2]), այնքան էլ ունեցել է նախանձողներ, չսիրողներ, նոյն իսկ թշնամիներ. կամ դէպի նա հայ իրականութեան յատուկ անտարբերութիւն։ Այդ հանգամանքը պարզ երևում է մեր տաղարանի «Վասն գեղեցիկ արուեստաւորաց» խորագիրը կրող երգից—«գեղեցիկ արուեստաւորաց ոչ ճանաչող կայ ոչ պատիւ դնող» ասելով գայրանում է տաղանդաւոր վարպետ Յոհնաթանը և շարունակում—

Շնորհալից մարդ կայ որ չեն լինի քուն
Ուսանին արհեստ, լինին բանիբուն.
Եւ թէ ընդունեն փոքր ինչ մեծութիւն

1) Հանգուցեալ Երիցեան թոյլ չտուեց մեզ ընդօրինակելու այդ նկարը. ներկայումս, նրա մահից յետոյ, մեզ յայտնի չէ ուր ենց նկարը. յարգելի տիկնոջից կամ որդուց՝ պ. Դ. Երիցեանից խնդրում ենք պատասխան։ Դ. Լ.

2) Ողբերգութիւն յաղագս մահուան վարպետ և Նաղաշ Յոհնաթանին ասացեալ որդոյն իւրոյ Յակոբայ» (Հրտ. Ա. Զօպանեանի, էջ 113.

Եւ կամ զգենոյն խելագոյն զգոյն (?)
Անշնորհ ծոյլն երբ տեսանէ զնոյն
Նախանձուի սիրտն և դառնայ արիւն.
Թէպէտ առերես խօսի քաղցրագոյն
Բայց ծածուկ կամի տալ դեղ դառնագոյն.
Լաւ փեշաքէրին գլխին է վայն
Հարգիզ չեն ջոկում վատն և լաւն
Թէ Հնդստանայ մաւն և զառն
Թէ դարաշամբին խոշոր աստառն...
Զաւահիր ճին գե՜ է ջաւահիր քարն
Արծաթի զատն գիտէ զարգեարն
Էշըն ի՞նչ գիտէ զինչ է տօմարն
Եւ խոզն ի՞նչ գիտէ մարգարտի շարն։
Իմ քաշած պատկերս որ լաւ յուանգ է
Փէնն [1]) կարակ է տեղն ֆռանկ է
Հէնց պատկեր կառնեն որ քու և լանգ է
Կասեն աժան է, քոնն խիստ թանգ է.
Բարակ մանողն յայգին վաճառեց
Եւ հաստ մանողն տուն և տեղ ճարեց
Մաղ մանողներին ճրագն վառուեց
Զարբաբ գործողին սիրտն պատառուեց։
Ո՞ւր է հանց խօջայ որ դայրաթ քաշի
Ընկած փէշաքէրին դալդեարն տաշի
Ամենքը կօպիտ են... սպը [2]) և նաշի
Կու թողին որ մարդ հալուի ու մաշի
Մանաւանդ հայոց ազգ նիրհուն և նկուն
Որ չունին իշխան, թալաւորութիւն
Պատուական մարդին կուտան նեղութիւն
Խօջայքն խմեն միմեանց ողջութիւն... և այլն

Այսքանը բաւ համարելով Ցոլնաթան բանաստեղծի մասին, այժմ անցնենք Ցոլնաթան նկարչի մասին։ [3])

Գ. Լեւոնեան

(Կը շարունակուի)

---

1) Լաւ չի կարդացւում.
2) Չի կարդացւում։
3) «Հանդէս Ամսօրեայի» թիւ 6—7—8 տետրակում, Հ. Ն. Ակինեան «Նաղաշ Ցոլնաթանին» նուիրած իր շահեկան յօդուածում խօսելով առհասարակ Ցոլնաթանեանների նկարների մասին—գրում է.

«Մենք պիտի աղաչենք Տփղիսի հայոց Ազգագրակ. ընկերութեան, որ նա իր վրայ վերցնէ այս պարտաւորութիւնը և տակաւ տակաւ ծանօթացնէ նմանահանութիւններով Տփղիսի և շրջակայքի գեղարուեստական մնացորդները»։

Պատիւ ունենք յայտնելու յարգելի Հ. Ն. Ակինեանին, որ մեր յօդուածի երկրորդ մասով նորութիւններ ունենք ասելու այս մեզ ամենից հետաքրքրելի Ցոլնաթանեան ընտանիքի գեղարուեստական գործերի մասին։

Գ. Լ.

Հայ աշուղներ. ժողովրդական հայ երգիչներ և տաղասացք. հաւաքեց Տրդատ եպիս. Պալեան. հատոր Ա. տետր Ա. Զմիւռնիա. 1911. 186 երես. գինը 10 ղրշ.

—

Բանասէր-հաւաքագրող Տրդատ եպիսկոպոս Պալեան տարիներ առաջ «Բիւրակն» շաբաթաթերթում տպագրուող իր «Հայ աշուղները» Զմիւռնիայում սկսել է լոյս ընծայել առանձին հատորներով։ Մեր ներկայ գրախօսութեան նիւթ կազմող գրքոյկը ա. հատորի ա. տետրակն է. որ իր մէջ ամփոփում է «Ա» սկզբնատառն ունեցող հայ աշուղների կարճառօտ կենսագրականներն ու նրանց երգերի նմուշները։

«Մեր այս հաւաքումը, թէև շարունակած ենք մինչև ներկայ թուականին—գրում է սրբազ. հաւաքագրողը իր «համառօտ բացատրութեան» մէջ, բայց և այնպէս կը խոստովանինք, թէ ամբողջական և կ··տարեալ գործ մը չը կրցանք պատրաստել, հակառակ մեր այնչափ ջերմ փափաքին, մասնաւոր գրքերու պրպտումին, թերթերու թղթատումին և հետաքրքիր բարեկամներու կողմէն տրուած տեղեկութիւններուն վրայ իսկ...»

Անշուշտ գովելի է սրբ. Պալեանի ջանասէր պրպտուքը մեր ժողովրդական երգիչներու և աշուղներու կեանքի նկարագիրն ու գործը լոյս ընծայելու համար, բայց ինչպէս նկատել կարողացանք, գրքոյկի բովանդակութիւնից՝ հայ աշուղներու և տաղասացներու մասին եղած նորագոյն ուսումնասիրութիւնները, նրանց երգերի ու տաղերի հաւաքածուները նրան անծանօթ են մնացել։

Ս. Պալեան կամ իր առաջաբանում կամ իր առաջ բերած իւրաքանչիւր աշուղի գործի տակ պէտք է յիշէր իր աղբիւրները, ինչպիս որ ընդունուած է գիտական-ուսումնասիրական գործերում, դորանով աւելի կը բարձրանար նրա աշխատութեան արժէքը, մէկ էլ որ իր քաղած նիւթերի հարազատութեան ամեն պատասխանատուութիւն կը մնար այն աղբիւրի վրայ, որից ինքը օգտուել է։ Հ. Պալեան բաւարար չափով օգտուելով Գ. Լևոնեանի և Գ. Ախվերդեանի «Հայ աշուղներ» նոյնանուն հրատարակութիւններից, (նոյն իսկ կրկնելով այն սխալները, ինչ որ այնտեղերը կան) ոչ մի տեղ չի յիշում այդ մասին։

Տրդ. եպ. Պալեանը գրում է.—

«Աշուղ ըսած ենք անոր, որ իր գործածած երաժշտական գործին շալկելով, երկու կամ երկուքէ աւելի ուրիշ աշուղներու ընկերակցութեամբ երգած և շրջագայած է նաև քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ և այլն, և իբրև երաժշտական գործիքի թելերը թրռ-

թրուացնելով երգած է հրապարակներու և սրճարաններու մէջ, հոծ և բազմաթիւ հետաքրքիր ունկնդիրներու առջև, շատ անդամ և ըստ իրենց սովորութեանց վարպետներու յօրինած և հեղինակած երգերէն և քիչ անգամ ալ իրենց յօրինածէն...»։

Այս տողերից երևում է որ Հ. Պալեան լաւ է բնորոշել աշուղը, որ է թափառիկ բանաստեղծ-երգիչ-երաժիշտ, բայց այս բնորոշումը ճիշտ անելով հանդերձ, յարգելի բանասէրը իր աշխատութեան մէջ խառն է դասաւորել թէ աշուղները, թէ տաղասացները և թէ «ղալամ շուարասիները» և թէ մանաւանդ մի քանի մատենագիրներ ու «գրական» բանաստեղծներ, ինչպիսիք են Անանիա Շիրակացի, Աւետիք պատրիարք, Ալամդարեան և այլն, ի հարկէ կարելի է տպագրել այդ կարգի բանաստեղծների քերթուածները, բայց ոչ «հայ աշուղները» ընդհանուր վերնագրի տակ կամ գոնէ պէտք էր առանձնացնել զուտ աշուղական երգերից ու տաղերից։

Հ. Պալեան իր գրքի սկզբում դնելով «Գողթան երգերից» մեր օրերը հասած մի քանի հատուածները՝ առաջ է բերում և մի տաղ «Երգ ի վերայ սուրբ Աստուածածնի» որ յայտնի չը լինելով ոը դարի և ոևմ գործ լինելը՝ այնուամենայնիւ հետաքրքրական է այն տեսակէտից, որ այդ տաղի մէջ յիշւում է մի շարք արևելեան-պարսկական մայր եղանակների անուններ-Նեվա, Պէյաթի, Սեղահ, (Սեգեահ,?) Զարգեահ, Տիւկեա, Հիւսէինի, Հեսարի, Հիճազ, Շահնազ և այլն։

Այնուհետև սկսւում է աշուղների և տաղասաց բանաստեղծների շարքը, ինչպէս ասացինք խառն, թուով 51, ա. թուից 21 աշուղները դրուած են շատ համառօտ, մի քանի տող յիշատակութեամբ և առանց երգի, մնացած երեսունից տասը աշուղների թուրքերէն երգերն են դրուած, իսկ քսանը մի երկու կամ մինչև տաս երգ ունեցողներ են. վերջիններիս թւում գրքի մէջ ամենամեծ տեղը (130 երես) բռնել են Առաքել Բաղիշեցին և Առաքել Սիւնին իրենց տաղերով։ Որտեղից են արդեօք այդ տաղերը, նրանց տպագրուած տաղերից է վերցրել սրբազան Պալեանը թէ անտիպ գործեր են, ոչինչ չի յիշւում, կամ թէ «յԱռաքել վարդապետէ ասացեալ»-ը դնելով ինչով կարող է հաստատապէս ասել թէ այդ բոլոր տաղերը վերոյիշեալ Առաքելներինն է և ոչ ուրիշ Առաքելների։ Մի տեղ նոյն իսկ Հ. Պալեան ինքն էլ է կասկածում՝ ասելով՝

«Առաքել Դաւրիժեցի մըն ալ կայ ժէ դարուն միաբան ս. Էջմիածնի ե աշակերտ Փիլիպպոս կաթուղիկոսի, զբաղուած է թէև պատմական գրութիւններով, բայց գրած է արդեօք տաղեր

ալ և Առաքել անուան տակ գրուած տաղերն կը պատկանին արդեօք իրան՝ ալ, չենք կրնար որոշ որ և է բան մը ասել»։

Այսպիսով Տրդատ եպիսկոպոսի ներկայ աշխատութիւնը լինելով մի խառն, անսիստեմ և աղբիւրների յիշատակութիւնից ու քննական համեմատութիւնից զուրկ մի հաւաքածու՝ կարող է լինել միայն ժողովրդական-ընթերցանութեան նիւթ, բայց ոչ ուսումնական-քննասիրական որոշ արժէք ունեցող հայագիտական գործ։ Նա տպագրել է իր նիւթերը առանց ընտրութեան, առանց գիտական խմբագրութեան, տպագրել է ինչ որ ձեռքն է ընկել — «մեր ձեռք հասածները կը դնենք այստեղ» ասելով։ Շատ երգերի տակ գրուած գաւառական կամ թուրքերէն բառերի թարգմանութիւնների մէջ էլ պակաս չեն սխալները.—

«Դիվ-թարգմանել է փուք (նշանակում է բոլորը.) 2. տավ ծոր (պէտք է լինի զետին) 3. սեհր՝ զբօսանք. (փոխանակ դիտել) (սէյրան-զբօսանք)։ 4. Սովդա սակարկութիւն, (փոխանակ սիրահարութիւն, մոլի սէր), 5. բոխախ-պարանոց. (բոխախը դնչի տակի փափուկ միսն է, ոչ պարանոցը.)։ 6 փարվան-ճրագ, (փարվանը ճրագ չէ, այլ ճրագի չորս կողմը պտոյտ եկող թիթեռնիկը)։ 7. Ալվան օղլան-փայլուն տղայ (ոչ թէ փայլուն այլ գոյնզգոյն) և այլն, իսկապէս նշանակում է ալվանեի ներկարար։

Այժմ մի քանի խօսք էլ աշուղների ցանկի մասին։ Սրբ. Պալեան եթէ տաղասացների մէջ դնում էր Առաքել Սիւնեցու և Առաքել Բաղիշեցու անունները, ապա պէտք է յիշեր նաև Արխատակէս վ. Խեզանցուն, Ատոմ երեց Վարագեցուն, Աբրահամ Ասատապատցուն, որոնք նոյնպէս տաղեր ու երգեր ունին գրած։ Իսկ բուն աշուղների շարքից դուրսն են մնացել հետևեալները, որոնք նոյնպէս «ա» տառով են սկսւում.—Արթուն Գրիգոր, Ասապով, Աֆկեարի, Անդրէաս, Ահարօն, Արութիւն, Աղաղիւլ...

Վերջացնելով մեր դիտողութիւնները Տրդատ եպ. Պալեանի աշխատութեան մասին՝ մենք չենք կարող չը յայտնել, մեր քաջալերութիւնը և ուրախութիւնը սրբազան քանասէրին, որ սիրում է զբաղուել հայրենի բանահիւսութեան յիշատակարաններով, ջանասէր կերպով հաւաքել և տպագրութեան է յանձնել մեր տաղասացներին և աշուղներին վերաբերեալ իր առաջին տետրակը։ Ցանկանում ենք սակայն որ Հ. Պալեան այսուհետև աւելի խնամքով վերաբերուի իր սիրելի գործին և յիշատակէ իր աղբիւրները որով ինչպէս վերևում էլ ասացինք, աւելի կը բարձրացնէ իր երկասիրութեան արժէքը, ցոյց տալով թէ որն է իրեն աշխատանքը, որը ուրիշից վերցրածը։

Գ. Հետնեան

Этнографическое Обозрѣніе, изд. Этнографическ. Отдѣла Имп. О-ва Любителей Естествознанія, Антропологіи и Этнографіи 1911. № 1—2

—

Ռուս ազգագրական միակ հանդէսը, որ կրում է վերոյիշեալ խորագիրը, վերջերս երկար յապաղումներով է լոյս տեսնում, տարեկան մի կամ երկու գրքով։ Այնուամենայնիւ չնայած այդ հանգամանքին Этнографическое Обозрѣніе-ն կազմած է լինում մեծ խնամքով ու բազմատեսակ բովանդակութեամբ, որ մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում ազգագրութեամբ զբաղուողներին։ Նմանապէս ուշադրութեան արժանի է այդ հանդէսի վերջին համարը։ Մի կողմը թողնելով մի քանի հիմնական ու խոշոր յօդուածները, որոնց մասին մատենախօսութեան շրջանակները չեն թոյլ տալիս մեզ կանգ առնել, յիշատակենք, որ ներկայ համարում զետեղուած են Կովկասին և ընդհանրապէս արևելքին վերաբերեալ հետաքրքիր աշխատութիւններ։

Վ. Միլլէրը խօսում է Կովկասում գոյութիւն ունեցող թաղման մի քանի ծէսերի ու սովորոյթների մասին, այն է դիակները այրելու կամ թաղելու գաղափարների տիրապետութեան ու նշանակութեան վերաբերմամբ։ Ընդ սմին նա մատնանշում է մազդեզանց կրօնի ազդեցութիւնն Կովկասեան նախնական ցեղերի հաւատալիքների ու ծէսերի վրայ։ Իշխ. Ն. Ս. Տրուբեցկոյը Редедя на Кавказѣ յօդուածում փորձում է ապացուցանել, որ հին ռուսական պատմութեան մէջ յիշատակուած Ռէդեդիա հերոսի անունն բնաւ չի պահպանուել Կովկասեան մի քանի լեռնական ժողովուրդների աւանդութիւններում (չերքէզների, օսերի), ինչպէս ճգնում են սխալմամբ հաւատացնել Կովկասցի բանաւոր հաւաքները։ Ռէդեդիայի անունը Կովկասի լեգենդներում այն նշանակութիւնը կարող էր ունենալ, որ դա լուսաբանում է որոշ չափով հին սլաւոն իշխանների և Կովկասի սահմանակցիկ ցեղերի միջև գոյութիւն ունեցող յարաբերութիւններն ու կռիւները։

Մնացեալ յօդուածներից հետաքրքրութիւն են ներկայացնում՝ կայտակների ծագման հարցը (Къ вопросу о кайтакахъ) և ռուսական Թուրքեստանի գորգագործութեան նկարագիրը։

Ա. Ս.